

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### 1. ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչությունը (այսուհետ՝ վարչություն) կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների իրականացման ընթացքում առաջնորդվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով, ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի N 1112-Ն որոշմամբ, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ, ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 23-ի N 207-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշմամբ:

Վարչությունը, ՀՀ վարչապետի 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1310-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2022 թվականի ծրագրի շրջանակում (այսուհետ՝ ծրագիր) 2022 թվականի ընթացքում իրականացրել է ՀՀ պետական կառավարման մարմինների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ՀՀ պետական բյուջեից, հանրապետական նպատակային հատուկ ֆոնդերից և պետական այլ աղբյուրներից գումարների հատկացման և ծախսման, արտաբյուջետային միջոցների գոյացման ու օգտագործման, ՀՀ պետական բյուջեից տրամադրվող հատկացումների հաշվարկման համար ներկայացվող տվյալների արժանահավատության և ՀՀ պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության ստուգումներ:

Իրականացված ստուգումներով ընդգրկվել են նաև պետական և 50 տոկոսից ավելի պետական մասնակցությամբ ընկերություններում ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների ծախսման նպատակայնության և հիմնավորվածության, գնումների գործընթացի ճշտության և օրինականության, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող բաժնետնասին համապատասխանող շահութաբաժինների հաշվարկման և ժամանակին ՀՀ պետական բյուջե վճարման ճշտության հարցերը:

Վարչության կողմից 2022 թվականին համապատասխան ստուգումներ են իրականացվել նաև ՀՀ վարչապետի հանձնարարականների հիման վրա, ինչպես նաև ՀՀ վարչապետի որոշումների համաձայն վարչության աշխատակիցները մասնակցել են ԱՊՀ, ԵԱՏՄ և ՀԱՊԿ մարմիններում իրականացված ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթային ստուգումներին:

Հաշվետու ժամանակաշրջանում, բացի վերը նշված ստուգումներից, ստուգումներ են իրականացվել նաև ՀՀ իրավապահ մարմինների պահանջով՝ վերջիններիս կայացրած որոշումներով առաջադրած հարցերի շրջանակներում:

## 2. 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ծրագրով նախատեսված 15 ստուգումներից 7-ը ավարտվել են հաշվետու ժամանակահատվածում («Հայավտոկայարան» ՓԲԸ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ քաղաքաշինության կոմիտե, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ, ՀՀ Շիրակի մարզպետարան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ):

Ծրագրում ընդգրկված 2 ստուգումներ (Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ, «Քոնթուրգլորբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ) ավարտվել ու ամփոփվել են 2023 թվականի 1-ին եռամսյակում և վերջիններիս արդյունքները սույն հաշվետվության մեջ չեն արտացոլվել: Մեկ ստուգում («Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ) դեռևս ընթացքում է:

Մեկ ստուգման դեպքում («Հայփոստ» ՓԲԸ) հրապարակվել է համապատասխան ստուգման հանձնարարագիր, սակայն ստուգումը դեռևս չի սկսվել:

Բացի վերը նշված ստուգումներից հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են նաև 4 հանդիպակաց ստուգումներ, որից 1-ը («Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույց)՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում իրականացված ստուգման շրջանակում, իսկ 3-ը (Գյումրու համայնքապետարան, Անիի համայնքապետարան, Ախուրյանի համայնքապետարան)՝ Շիրակի մարզպետարանում իրականացված ստուգման շրջանակում: Հանդիպակաց ստուգումների անհրաժեշտությունը պայմանավորված է եղել ստուգման ընթացքում ձեռք բերված և երրորդ անձանցից ստացված առանձին տեղեկությունների ճշտմամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում ավարտվել և ամփոփվել են նաև ՀՀ պետական բյուջեի հսկողության 2021 թվականի ծրագրի շրջանակում սկսված 1 ստուգում (ՀՀ աշխատանքի սոցիալական հարցերի նախարարություն), որի շրջանակում 2022 թվականին իրականացվել են նաև 7 հանդիպակաց ստուգումներ:

(Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ, «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ, «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ, «Վարդենիսի նյարդահոգեբանական-տուն ինտերնատ» ՊՈԱԿ, «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ, «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ, «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ):

2022 թվականին ծրագրից դուրս վարչության կողմից իրավապահ մարմինների կայացրած որոշումների հիման վրա իրականացվել են 5 ստուգումներ, այդ թվում՝ «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ, «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ, ՀՀ ճանապարհային ոստիկանության Արմավիրի հաշվառման և քննական բաժանմունք», «Այրումի գյուղական բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ, որի ստուգումը սկսվել է 2021 թվականին, սակայն ավարտվել և ամփոփվել է 2022 թվականին և «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ, որի ստուգումը ավարտվել ու ամփոփվել է 2023 թվականի 1-ին եռամսյակում և վերջինիս արդյունքները սույն հաշվետվության մեջ չեն արտացոլվել:

ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարականներով 2022 թվականին վարչության կողմից իրականացվել են 2 («Հայանտառ» ՊՈԱԿ, ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտ) ստուգումներ:

ՀՀ վարչապետի որոշումներով 2022 թվականին վարչության աշխատակիցները մասնակցել են ԱՊՀ, ԵԱՏՄ և ՀԱՊԿ մարմիններում իրականացված 5 ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների (ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհուրդ, ԱՊՀ մասնակից-պետությունների տարածքում կազմակերպված հանցավորության և հանցագործությունների այլ վտանգավոր տեսակների դեմ պայքարը համակարգող բյուրոյի քարտուղարություն, Եվրասիական տնտեսական հանձնաժողով, Եվրասիական տնտեսական միության դատարան և ՀԱՊԿ Քարտուղարություն ու Միացյալ շտաբ):

Այսպիսով, 2022 թվականի ընթացքում վարչության կողմից իրականացվել են ընդամենը 35 ստուգումներ (այդ թվում՝ 11-ը՝ հանդիպակաց), որոնցից 5-ը ամփոփվել են 2023 թվականին:

2022 թվականին, ինչպես և 2021 թվականին, պետական կառավարման մի շարք մարմիններում (ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ քաղաքաշինության կոմիտե, ՀՀ Շիրակի մարզպետարան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն) ստուգումներն իրականացվել են ծրագրային բյուջետավորմանը համապատասխան ստուգումներ իրականացնելու սկզբունքով, ինչը հնարավորություն է տալիս հսկողություն սահմանել ծրագրի կամ միջոցառման ողջ

գործընթացի նկատմամբ՝ ներառելով բյուջետային հայտերի կազմման աշխատանքներից մինչև ծրագիր կամ միջոցառում իրականացնողների կողմից աշխատանքների ավարտման ամբողջական շղթան: Մասնավորապես, նշված սկզբունքի կիրառմամբ վերոհիշյալ 5 պետական մարմիններում ընտրվել են 25 բյուջետային ծրագրեր (միջոցառումներ):

2022 թվականի ընթացքում վարչության կողմից իրականացված և ավարտված ստուգումներով արձանագրվել են ընդամենը 1,958.3 մլն. դրամի խախտման փաստեր, որից վերականգնման (վերաձևակերպման) է առաջադրված 839.0 մլն. դրամը: Վերականգնման չառաջադրված 1,119.3 մլն. դրամի խախտումներից 6.3 մլն. դրամն արձանագրվել է իրավապահ մարմինների պահանջով իրականացված ստուգումների արդյունքում, 693.7 մլն. դրամը անհամապատասխանություններ են, որոնց արժանահավատությունը և իսկությունը հնարավոր է պարզել իրավասու մարմինների համապատասխան իրավական գնահատական տալուց հետո, 302.7 մլն. դրամը «Գնումների մասին» օրենքի պահանջների խախտումներ են, 73.9 մլն դրամը իրավական ակտերով սահմանված չափորոշիչներից ավել հաստիքային միավորների ավել սահմանում և աշխատավարձի ֆոնդի ավել նախատեսում, 42.7 մլն. դրամը իրենից ներկայացնում է ոչ նպատակային, ոչ արդյունավետ ծախսեր, պարզևատրում և այլն:

Վերականգնման (վերաձևակերպման) ենթակա 839.0 մլն. դրամից 700.0 մլն. դրամը առաջադրվել է մուտքագրման ՀՀ պետական բյուջե, 10.9 մլն. դրամը ենթակա է վերականգնման կազմակերպությունների հաշվին, 15.0 մլն դրամը ենթակա է վերականգնման համայնքային բյուջե, իսկ 113.1 մլն. դրամը ենթակա է պակասեցման պետական բյուջեից ֆինանսավորման գումարից:

Հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված գումարներից վերականգնվել է ընդամենը 210.8 մլն. դրամ (այդ թվում 180.6 մլն. դրամը՝ 2022 թվականին կատարված ստուգումներով արձանագրված գումարներից, 30.2 մլն. դրամը՝ նախորդ ժամանակաշրջաններում կատարված ստուգումներով արձանագրված գումարներից):

Վարչության կողմից կատարված ստուգումներով արձանագրված գումարներից 2022 թվականի ընթացքում վերականգնված կամ վերաձևակերպված գումարների վերաբերյալ տեղեկատվությունն ըստ առանձին տարիների ներկայացվում է ստորև.

(հազ. դրամ)

| Արձանագրման տարեթիվ | 2022 թվականին վերականգնվել կամ վերաձևակերպվել է |                                  |                           |                              |                                  |                                      |
|---------------------|---|----------------------------------|---------------------------|------------------------------|----------------------------------|--------------------------------------|
|                     | Ընդամենը  | Վերականգնվել է ՀՀ պետական բյուջե | Վերականգնվել է աշխատանքով | Պակասեցվել է ֆինանսավորումից | Մուտքագրվել է համայնքային բյուջե | Մուտքագրվել է կազմակերպության հաշվին |
| 1                   | 2   | 3                                | 4                         | 5                            | 6                                | 7                                    |
|                     |   |                                  |                           |                              |                                  |                                      |

|  |           |           |          |          |         |       |
|--|-----------|-----------|----------|----------|---------|-------|
| 2022 թվականին ավարտված ստուգումներով վերականգնված գումար | 180,615.2 | 116,984.8 | 40,728.5 | 17,018.8 | 5,513.0 | 370.1 |
| 2021 թվականին ավարտված ստուգումներով վերականգնված գումար | 30,232.3  | 30,232.3  | -        | -        | -       | -     |
| Ընդամենը 2022 թվականի ընթացքում վերականգնված գումար      | 210,847.5 | 147,217.1 | 40,728.5 | 17,018.8 | 5,513.0 | 370.1 |

2022 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման հսկողության արդյունքներով արձանագրված խախտումների և թերությունների վերացման ու ռիսկերի հետագա զսպման նպատակով յուրաքանչյուր ստուգման ավարտից հետո, ՀՀ ֆինանսների նախարարի կողմից համապատասխան առաջարկություններով գրություններ են հասցեագրվել ստուգված կազմակերպություններ և պատկան վերադաս մարմիններ:

Պատասխանատու մարմինների կողմից խախտումների վերացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ ստացվող տեղեկատվության համաձայն համապատասխան պաշտոնատար անձանց տրվել են հանձնարարականներ, արձանագրված գումարների մի մասը վերականգնվել է:

Վերոնշյալ տեղեկատվությունների վերլուծությունը և հաշվետվությունում արտացոլված տվյալները հիմք են տալիս եզրակացնելու, որ ինչպես վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները, այնպես էլ պատկան վերադաս մարմինները պատշաճ միջոցներ չեն ձեռնարկել ստուգումներով արձանագրված խախտումների և թերությունների վերացման, ռիսկերի հետագա զսպման, ինչպես նաև արձանագրված գումարների վերականգնման ուղղությամբ:

2022 թվականի ընթացքում ծրագրով, ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարականներով, ՀՀ իրավապահ մարմինների պահանջով և ՀՀ վարչապետի որոշումներով իրականացված ստուգումների ամփոփ արդյունքները ներկայացված են կից NN 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածներում:

2022 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման հսկողության ծրագրով հաշվետու ժամանակաշրջանում իրականացված ստուգումներն առավել մանրամասն ներկայացվում են ստորև.

### 3. ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1. Հանրակրթական ուսուցման, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների (ներառական) կրթության և նախադպրոցական կրթության ծրագրերի իրականացման համար ՀՀ Շիրակի մարզպետարանին (այսուհետ՝ մարզպետարան) հատկացված գումարների ճշտության ստուգմամբ պարզվել է, որ առանձին դեպքերում խախտվել են

«Հանրակրթության մասին» օրենքի, «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի, ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման, ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 141-Ն որոշման, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի N 152-Ա/2 հրամանի պահանջները, մասնավորապես.

1) Հանրակրթական ուսուցման, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների (ներառական) կրթության ծրագրի շրջանակում առանձին դպրոցների կողմից աշակերտների թվաքանակը մարզպետարանին ավել ներկայացնելու, ինչպես նաև մարզպետարանի կողմից կատարված հաշվարկների արդյունքում՝ 24 դպրոցների ավել է ֆինանսավորվել ընդամենը 12,762.9 հազ. դրամ, այդ թվում՝ 2019 թվականին՝ 2,214.7 հազ. դրամ, 2020 թվականին՝ 2,275.5 հազ. դրամ, 2021 թվականին՝ 8,272.7 հազ. դրամ:

2) Նախադպրոցական կրթություն ծրագրի շրջանակում առանձին դպրոցների կողմից աշակերտների թվաքանակը մարզպետարանին ավել ներկայացնելու, ինչպես նաև մարզպետարանի կողմից կատարված հաշվարկների արդյունքում 6 դպրոցների ավել է ֆինանսավորվել ընդամենը 4,104.7 հազ. դրամ, այդ թվում՝ 2019 թվականին՝ 760.2 հազ. դրամ, 2020 թվականին՝ 1,600.0 հազ. դրամ, 2021 թվականին՝ 1,744.5 հազ. դրամ: Արդյունքում հանրակրթական ուսուցման, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների (ներառական) կրթության և նախադպրոցական կրթության ծրագրերի գծով առանձին դպրոցների կողմից աշակերտների թվաքանակը մարզպետարանին ավել ներկայացնելու, ինչպես նաև մարզպետարանի կողմից կատարված հաշվարկների արդյունքում 26 դպրոցների համար ՀՀ պետական բյուջեից ավել է ֆինանսավորվել 16,867.6 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

2. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կենտրոնական ապարատի պահպանում» ծրագրի շրջանակում հատկացված գումարների ծախսման ճշտության ստուգմամբ պարզվել է, որ՝

1) խախտվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի չափերի հաշվարկման և հատուցման վճարման» կարգի Հավելված 1-ի 9-րդ կետի պահանջները՝ մարզպետարանի գործուղման մեկնած աշխատակիցների կողմից չեն ներկայացվել փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունները:

2) համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի N 706-Ն որոշման հավելվածի 87-րդ կետի պահանջի՝ «Այլ նպաստեր բյուջեից» հոդվածով չօգտագործված ազատ մնացորդը՝ գումարով 20.0 հազ. դրամ, բյուջետային

տարվա ավարտին մարգպետարանի կողմից չի վերադարձվել գանձապետական հաշվին և ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

3) Խախտվել է «Ներքին աուդիտի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջները՝ 2021 թվականի մարգպետարանի ներքին աուդիտի իրականացվել է՝ առանց 2021-2023 թվականների ռազմավարական և 2021 թվականի տարեկան ծրագրերի հաստատման և վավերացման:

3.«ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» բյուջետային ծրագրի (միջոցառման) շրջանակներում ընտրանքային կարգով իրականացված ստուգմամբ պարզվել է, որ՝

1) Խախտվել է ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 171-Ն որոշման 1-ին կետի և 4-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջները՝ առանց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հետ համաձայնեցման, մարգպետարանը կազմակերպել է ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 22-ի N 223-Ն որոշման համաձայն ձեռքբերված և որոշակի քանակությամբ չբաշխված վառելափայտի տրամադրումը որոշման 1-ին կետով սահմանված պահանջին չհամապատասխանող այլ շահառուներին: «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ»-ից հատկացված գումարների ծախսման ճշտությունը պարզելու նպատակով ստուգող խմբի կողմից իրականացվել են հանդիպակաց ստուգումներ Ախուրյանի, Գյումրու և Անիի համայնքապետարաններում և ստուգման արդյունքներն ամփոփվել են համապատասխանաբար 2022 թվականի օգոստոսի 15-ի N 30-Ա, 2022 թվականի օգոստոսի 19-ի N 28-Ա և 2022 թվականի օգոստոսի 19-ի N 29-Ա կազմված ակտերում: Համայնքապետարաններում իրականացված հանդիպակաց ստուգումների արդյունքում՝ ստուգվող ժամանակաշրջանում ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին՝ «Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով արձանագրվել է՝

2) Ախուրյանի համայնքապետարանում իրականացված ստուգման արդյունքներով՝ 13 օբյեկտների գծով արձանագրվել է 29,768.7 հազ. դրամի խախտումներ, որից 17,613.8 հազ. դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե և 12,154.7 հազ. դրամը՝ համայնքային բյուջե: Խախտվել է ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 33-րդ կետի 11-րդ ենթակետի պահանջը՝ աշխատանքների կատարման ընթացքում առաջացել են նախագծային շեղումներ՝ սկզբնական նախագծի 10%-ը գերազանցող լրացուցիչ աշխատանքների չափով:

3) Գյումրու համայնքապետարանում իրականացված ստուգման արդյունքներով 17 օբյեկտների գծով արձանագրվել է 5,484.7 հազ. դրամի խախտումներ, որից 2,853. 7 հազ. դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե և 2,631. 0 հազ. դրամը՝ համայնքային բյուջե: Խախտվել է կապիտալ

սուրվենցիայի հատկացման պայմանագրերի 5.2 կետերի պահանջները՝ ստացված սուրվենցիաների հաշվին ֆինանսավորվող նպատակային ծախսատեսակների կատարումից (ծրագրի ավարտից) հետո սուրվենցիայի չօգտագործված գումարը կազմում է ընդհանուր 11,975.0 հազ. դրամ, որը ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջե: Խախտվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 56 կետի 2-րդ ենթակետի պահանջները և գնման պայմանագրի շրջանակում կողմերի միջև կնքվել է համաձայնագիր, որը գերազանցել է պայմանագրային գնի 10%-ը:

4) Անիի համայնքապետարանում իրականացված ստուգման արդյունքներով 1 պայմանագրի գծով արձանագրվել է 594.7 հազ դրամի խախտումներ, որից 356.8 հազ. դրամը ենթակա է վերականգման ՀՀ պետական բյուջե և 237.9 հազ. դրամը՝ համայնքային բյուջե:

Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1. մարզպետարանում քննարկման առարկա դարձնել ստուգման ակտով արձանագրված խախտումները և բացթողումները, ինչպես նաև վեր հանել պաշտոնատար անձանց կողմից օրենքների և համապատասխան իրավական ակտերի պահանջները ոչ պատշաճ կատարելու պատճառները:

2. Ձեռնարկել միջոցներ.

1) «Այլ նպաստեր բյուջեից» հոդվածով չօգտագործված ազատ մնացորդը՝ գումարով 20.0 հազ. դրամ, ՀՀ պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ:

2) մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին՝ հանրակրթական ուսուցման, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների (ներառական) կրթության և նախադպրոցական կրթության ծրագրերի գծով ավել ֆինանսավորված 16,867.6 հազ. դրամ գումարը ՀՀ պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ:

3) «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» բյուջետային ծրագրի (միջոցառման) շրջանակներում ստուգվող ժամանակաշրջանում՝ սույն ակտով արձանագրված 32,799.3 հազ. դրամը (17,613.8+2,853.7+11,975.0+356.8) ՀՀ պետական բյուջե և 15,023.6 հազ. դրամը (12,154.7+2,631.0+237.9)՝ համապատասխան համայնքային բյուջե վերականգնելու ուղղությամբ:

3. Ապահովել ստուգման արդյունքներով արձանագրված ՀՀ պետական բյուջե վերադարձման ենթակա գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջեի «Նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» թիվ 900005280640 գանձապետական հաշվին, «ՀՎՀՀ»-ից առաջ նշելով 80 թիվը, իսկ «Վճարման նպատակը» դաշտում՝ ստուգման ակտի համարը և կազմման ամսաթիվը:

Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել է վերականգնման ենթակա 64,710.5 հազ. դրամի խախտման փաստեր, որից 2023 թվականի ապրիլի 1-ի դրությամբ վերականգնվել է 41,103.5 հազ. դրամը:

#### 4. ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1. ՀՀ օրենսդրության և համապատասխան իրավական ակտերի պահանջների խախտման արդյունքում «Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագիրը իրականացնող, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) ենթակա կազմակերպություններում՝ «Երևանի N 1 տուն-ինտերնատ», «Նորքի տուն-ինտերնատ», «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ», «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ներում (այսուհետ՝ կազմակերպություն) և նախարարությանը ոչ ենթակա «Հայկական կարմիր խաչ ընկերություն» ՀԿ-ի Գյումրու խնամքի կենտրոնում ծրագրի իրականացման ընթացքում՝ հանդիպակաց ստուգումների արդյունքում արձանագրվել են 192,726.3 հազ. դրամի ՀՀ օրենսդրության, իրավական ակտերի և ընթացակարգային տարաբնույթ խախտումներ և անհամապատասխանություններ, որից ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը կազմում է 53,865.3 հազ. դրամ, իսկ կազմակերպությունների գանձապետական հաշվին վերականգնման ենթակա գումարը՝ 2,766.8 հազ. դրամ:

2. ՀՀ օրենսդրության և համապատասխան իրավական ակտերի պահանջների խախտման արդյունքում «Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի իրականացնող, Նախարարությանը ենթակա կազմակերպություններում՝ «Գյումրու «Երեխաների տուն», «Երևանի Մանկան տուն», «Գավառի մանկատուն», «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն», «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ներում (այսուհետ՝ կազմակերպություն) ծրագրի իրականացման ընթացքում՝ հանդիպակաց ստուգումների արդյունքում արձանագրվել են 393,894.8 հազ. դրամի ՀՀ օրենսդրության, իրավական ակտերի և ընթացակարգային տարաբնույթ խախտումներ և անհամապատասխանություններ, որից ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը կազմում է 132,643.6 հազ. դրամ, իսկ կազմակերպությունների գանձապետական հաշվին վերականգնման ենթակա գումարը՝ 2,695.0 հազ. դրամ:

3. Նախարարության կողմից կենտրոնացված կարգով կնքվել են 59,718.7 հազ. դրամի ծխախոտի ձեռքբերման գնման պայմանագրեր, որի դիմաց

կատարվել է 49,737.6 հազ. դրամի ոչ նպատակային ծախս, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

4. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 33-րդ կետի 16-րդ և 17-րդ ենթակետերի և գնման պայմանագրերի 8.9 կետերի պահանջների խախտման արդյունքում 5 գնման պայմանագրերի միակողմանի լուծելու մասին ծանուցումները չեն հրապարակվել տեղեկագրում:

5. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 33-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջի խախտման արդյունքում լուծված պայմանագրերի գծով չեն հաշվարկվել և հաշվանցվել ՀՀ պետական բյուջե ընդամենը 644.9 հազ. դրամի տույժերը և տուգանքները:

6. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 100-րդ կետի 6-րդ ենթակետի գ. պարբերության և գնման պայմանագրերի անբաժանելի մաս կազմող «Տուժանքի մասին համաձայնագիր»-ի 1.4 և 2.3 կետերի պահանջների խախտման արդյունքում նախարարության կողմից չի գանձվել ՀՀ պետական բյուջե ընդամենը 117,456.1 հազ. դրամի տուժանքի գումար:

7. Վերը նշված ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա ընդամենը 354,347.5 հազ. դրամ գումարից ստուգման ընթացքում վերականգնվել է ընդամենը 16,724.7 հազ. դրամ:

Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1. Ձեռնարկել միջոցներ ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա 337,622.8 հազ. դրամ գումարը (53,865.3+132,643.6+49,737.6+644.9+117,456.1-16,724.7) 900005280640 գանձապետական հաշվին (վճարման հանձնարարագրում ՀՎՀՀ-ից առաջ նշելով 80 թիվը և վճարման նպատակը դաշտում՝ ստուգման ակտի համարը և կազմման ամսաթիվը), իսկ 5,461.8 հազ. դրամ գումարը կազմակերպությունների համապատասխան գանձապետական հաշիվներին փոխանցելու համար:

2. Գնումների գործընթացը կազմակերպել և անցկացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

3. Կազմակերպությունների նախահաշիվների հողվածային փոփոխությունները իրականացնել գործող օրենսդրության պահանջներին համապատասխան և դրանց արդյունքում կատարվող ծախսերի նկատմամբ իրականացնել պատշաճ հսկողություն:

4. Ձեռնարկել միջոցներ կազմակերպություններում շահառուների խնամքը և դրա վրա կատարվող ծախսերը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են 761,674.7 հազ. դրամի խախտման փաստեր, որից 359,809.6 հազ. դրամը ենթակա է վերականգնման: 2023 թվականի ապրիլի 1-ի դրությամբ վերականգնվել է 16,846.8 հազ. դրամը:

#### 5. ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ստուգման արդյունքներով արձանագրվել է, որ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» 1022-12001 և «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ազրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում»՝ 1022-12004 ծրագրերի (միջոցառումների) գծով 2019-2021 թվականների ընթացքում և 2022 թվականի 1-ին կիսամյակում կնքվել են ընդամենը 79901 վարկային պայմանագրեր՝ ընդհանուր գումարով 240,600,541.0 հազ. դրամի չափով, որոնց փաստացի սուբսիդավորումը կազմել է 28,371,207.0 հազ. դրամ:

1. «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում»՝ 1022-12001 ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) գծով կնքվել են 79336 վարկային պայմանագրեր՝ 178,962,364.2 հազ. դրամի չափով, որոնց փաստացի սուբսիդավորումը կազմել է 22,874,007.3 հազ. դրամ: Առանձին ֆինանսական կառույցների (այսուհետ՝ ՖԿ) կողմից ներկայացված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ: Վարկի տրամադրման համար հիմք ծառայած փաստաթղթերը՝ բիզնես ծրագրերը, հողի սեփականության կամ վարձակալության, անասունների գլխաքանակի, գյուղատնտեսական նշանակության շենք-շինությունների առկայությունը հաստատող փաստաթղթերի և իրականացված մոնիթորինգների հաշվետվությունների պատճենները ստուգմանը չեն տրամադրվել (ՖԿ-ները մերժել են փաստաթղթերի տրամադրումը՝ հղում անելով «Բանկային գաղտնիքի մասին» օրենքին): Ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման գումարների ստացման նպատակով ՖԿ-ների կողմից ներկայացվող որոշ հայտերի (այսուհետ՝ հայտ) «վարկի օգտագործման ոլորտ» դաշտում լրացված տվյալների համաձայն վարկերի տրամադրումը չի համապատասխանում ծրագրի պահանջներին: Կնքված պայմանագրերում հստակ ձևակերպված չէ տրամադրվող վարկի նպատակը՝ վարկային պայմանագրերում վարկի նպատակը ձևակերպված է անորոշ և ընդհանրական, առանձին պայմանագրերում նշվում է, որ վարկը տրամադրվում է գյուղատնտեսության մեջ օգտագործման նպատակով: Ներկայացված առանձին հայտերում «վարկի օգտագործման ոլորտ» դաշտը ընդհանրապես լրացված չէ: Կնքված պայմա-

նագրերում տրամադրվող վարկի նպատակի ոչ կոնկրետ ձևակերպումը հնարավորություն չի տալիս պարզելու, թե դրանց տրամադրումն արդյո՞ք համապատասխանում է ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 17-ի N 184-Լ որոշման պահանջներին: Որոշ վարկառուների վերաբերյալ ներկայացված հայտերի «գործունեության բնակավայր» դաշտում լրացված է Երևան քաղաքի վարչական շրջանների տարածքներ, որտեղ ըստ հայտում ներկայացված տվյալների վարկառուները գրառվել են խոշոր եղջերավոր անասունների բուծմամբ, խառը բուսաբուծությամբ և այլն: ՖԿ-ների կողմից «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցին (այսուհետ՝ ԳՖԿ) ներկայացված հայտերում, վարկային պայմանագրի համար հիմք ծառայած վարկային հայտերում (բիզնես ծրագիր) առկա է նշված վարկի նպատակի և ծրագրով սահմանված նպատակների անհամապատասխանություն: ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 17-ի N 184-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 17-րդ կետի համաձայն ծրագրի մոնիթորինգն իրականացնում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն)՝ վարկառու տնտեսավարող սուբյեկտներում ուսումնասիրություններ իրականացնելով: ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 20-ի N 832-Լ որոշմամբ հանվել է վարկառու տնտեսավարող սուբյեկտներում նախարարության կողմից մոնիթորինգ իրականացնելու գործառույթը, վերապահելով այն ՖԿ-ներին: Ստուգող խմբի կողմից ուսումնասիրվել է մինչև տվյալ որոշման փոփոխության ուժի մեջ մտնելը նախարարության գյուղատնտեսության խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության կողմից հաշվետու ժամանակաշրջանում երկու անգամ իրականացված ծրագրային դասընթացների արդյունքում հավաստագրված և վարկ ստացած գյուղացիական տնտեսություն վարողների վարկերի օգտագործման նպատակայնության մոնիթորինգի արդյունքները: Առաջին մոնիթորինգը իրականացվել է 2020 թվականի հունիս-հուլիս ամիսների ընթացքում և ընդգրկել է 2019 թվականի չորրորդ եռամսյակից մինչև 2020 թվականի մայիսի 15-ը ընկած ժամանակահատվածը, որի արդյունքում մոնիթորինգի է ենթարկվել 695 վարկառու կամ վարկառուների 5,7%-ը: Երկրորդ մոնիթորինգը իրականացվել է 2020 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում և ընդգրկել է 2020 թվականի մայիսի 15-ից մինչև սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածը, որի արդյունքում մոնիթորինգի է ենթարկվել 150 վարկառու կամ վարկառուների 0.79%-ը: Կատարված մոնիթորինգների արդյունքում 24 վարկառուների կողմից վարկերի օգտագործումը դիտարկվել է որպես ոչ արժանահավատ, այսինքն՝ տվյալ պահի դրությամբ՝ ոչ նպատակային: Նշված մոնիթորինգների արդյունքում գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակում 8 շահառուներին տրամադրված սուբսիդիայի գումարներից հետ

վերադարձված գումարի չափը կազմել է ընդամենը 1,659.3 հազ. դրամ: ՀՀ ֆինանսների նախարարի 2022 թվականի մայիսի 31-ի N 01/15-1/9979-2022 գրությանն ի պատասխան՝ ՀՀ կենտրոնական բանկը 2022 թվականի հուլիսի 15-ի N 06-07/0533-22 գրությամբ ներկայացված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի» շրջանակում 2019-2021 թվականների և 2022 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեից վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նպատակով ֆինանսական կառույցների կողմից իրականացված վարկերի նպատակայնության և ճշտության մոնիթորինգի արդյունքում ՀՀ պետական բյուջե վերականգնված գումարների վերաբերյալ 17 բանկերից և վարկային կազմակերպություններից հավաքագրված տեղեկատվության համաձայն «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» 1022-12001 ծրագրի գծով 157,846,717.0 հազ. դրամ վարկային պայմանագրերի դիմաց փաստացի սուբսիդավորման գումարը կազմել է 17,566,716.6 հազ. դրամ, իսկ ՖԿ-ների կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքում բյուջե հետ վերադարձված գումարի չափը կազմել է ընդամենը 6,856.0 հազ. դրամ: Ներկայացված բիզնես ծրագիրն ու ՖԿ-ների կողմից կատարված նպատակային մոնիթորինգը հիմնականում ամբողջությամբ կրկնում են միմյանց, շատ դեպքերում իրականացված նպատակային մոնիթորինգները կրել են ձևական բնույթ և առկա են անհամապատասխանություններ վարկային հայտերով ներկայացված գործունեության հետ: Այսպիսով, 2019-2021 թվականների և 2022 թվականի հաշվետու ժամանակահատվածում ՖԿ-ների և Նախարարության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքում «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» 1022-12001 ծրագրով հետ վերադարձված գումարի չափը կազմել է ընդամենը 8,515.3 հազ. դրամ (6,856.0 + 1,659. 3): Հաշվի առնելով վերը նշվածը, արձանագրվել է, որ գործող օրենսդրական կարգավորումները, մասնավորապես «Բանկային գաղտնիքի մասին» օրենքով և ՀՀ կառավարության N 184-Լ որոշմամբ սահմանված վերահսկողական գործառնությունների իրականացման սահմանափակումները, հնարավորություն չեն տալիս լիարժեքորեն իրականացնել տվյալ միջոցառման գծով տրամադրված վարկերի տոկոսադրույքների պետական բյուջեից տրամադրված 22,874,008. 1 հազ. դրամի սուբսիդավորված գումարների ճշտության ստուգում, ինչպես նաև հնարավորություն չեն ընձեռում սուբսիդավորվող միջոցների նպատակային օգտագործման արդյունավետությունը գնահատելու և դրանց նկատմամբ պատշաճ վերահսկողությունը ապահովելու համար: Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019

թվականի մարտի 7-ի N 184-L որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1424-L որոշմամբ վերջինս ուժը կորցրած է ճանաչվել 2023 թվականի հունվարի 1-ից:

2. «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» 1022-12004 ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակում 2019-2021 թվականների ընթացքում և 2022 թվականի 1-ին կիսամյակում կնքվել են ընդամենը 565 վարկային պայմանագրեր՝ ընդհանուր գումարով 61,638,176.8 հազ. դրամի չափով, որոնց գծով փաստացի սուբսիդավորումը կազմել է ընդամենը 5,497,199.7 հազ. դրամ: ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ծրագրի մասով 53,381,659.2 հազ. դրամ վարկային պայմանագրերի դիմաց փաստացի սուբսիդավորման գումարը կազմել է 4,305,028.4 հազ. դրամ, իսկ ՖԿ-ների կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքում բյուջե հետ վերադարձված գումարի չափը կազմել է ընդամենը 83.6 հազ. դրամ: 2019-2021 թվականների ընթացքում ԳՖԿ-ի կողմից փաստացի մոնիթորինգ է իրականացվել 546 վարկային պայմանագրերից 20-ի նկատմամբ, կամ փաստացի մոնիթորինգ է իրականացվել ընդհանուր վարկային պայմանագրերի 3.7 տոկոսը, որի արդյունքում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել: Նշենք, որ մոնիթորինգի ենթարկված ժամանակաշրջանում ՖԿ-ների կողմից վարկային պայմանագրերով տրամադրված վարկերի ընդհանուր գումարը կազմել է 59,537,880.7 հազ. դրամ, իսկ վարկերի տոկոսադրույքների փաստացի սուբսիդավորման գումարը՝ 3,755,040.0 հազ. դրամ: Ծրագրի շրջանակում կնքված 565 վարկային պայմանագրերից ստուգվել է ընդամենը 26-ը՝ ընդհանուր գումարով 14,494,826.9 հազ. դրամի չափով, որոնց փաստացի սուբսիդավորման գումարը կազմել է 1,497,581.3 հազ. դրամ, որի արդյունքում վերականգնման է առաջադրվել 111,231.3 հազ. դրամ, ընդ որում 70,172.6 հազ. դրամը ստուգման ընթացքում վերականգնվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գանձապետական հաշվին: Մասնավորապես.

1) «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի ու «Ավշարի գինու գործարան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ ընկերություն) միջև 2019 թվականի սեպտեմբերի 16-ին կնքված թիվ V19-048117 և 2020 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված թիվ V20-059679 վարկային պայմանագրերի համաձայն վերջինիս գյուղատնտեսական հումքի մթերման նպատակով ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-L որոշմամբ հաստատված ծրագրի (այսուհետ՝ որոշմամբ հաստատված ծրագիր) շրջանակում 2019-2020 թվականների ընթացքում տրամադրվել է 1,100,000.0 հազ. դրամի (այդ թվում 2019 թվականին՝ 500,000.0 հազ. դրամ, 2020 թվականին՝ 600,000.0 հազ. դրամ) չափով վարկ: Վերջինս՝ համաձայն գնման ակտերի, 2019-2020 թվականների ընթացքում մթերել է 1,068,729.5 հազ. դրամ (այդ թվում 2019 թվականին՝ 484,931.0 հազ. դրամ, 2020 թվականին՝ 583,798.5 հազ. դրամ) արժեքով

գյուղատնտեսական հումք, որոնց դիմաց համաձայն վճարման հանձնարարագրերի շահառուներին վճարել է 1,015,371.5 հազ. դրամ (այդ թվում՝ 2019 թվականին՝ 453,582.0 հազ. դրամ, 2020 թվականին՝ 561,789.5 հազ. դրամ) կամ որ նույնն է տրամադրված վերը նշված վարկային միջոցներից չի հիմնավորվել 84,628.5 հազ. դրամի (այդ թվում՝ 2019 թվականին՝ 46,418.0 հազ. դրամ, 2020 թվականին՝ 38,210.5 հազ. դրամ) նպատակային ծախսը, որով խախտվել է վերը նշված պայմանագրերի 1.2 կետի և որոշմամբ հաստատված ծրագրի 26-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները: Հիմք ընդունելով որոշմամբ հաստատված ծրագրի 32-րդ կետի բ. ենթակետի պահանջը, ավել տրամադրված 84,628.5 հազ. դրամ վարկին բաժին ընկնող 9,308.6 հազ. դրամի (այդ թվում՝ 2019 թվականին՝ 2,103.0 հազ. դրամ, 2020 թվականին՝ 7,505.6 հազ. դրամ) տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջե:

2) «Ավշարի գինու գործարան» ՍՊԸ-ն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակում հատկացված վարկային միջոցներից 2019-2020 թվականների ընթացքում հումքի գնման պայմանագրերի համաձայն 693,750.0 հազ. դրամի չափով (այդ թվում 2019 թվականին՝ 411,000.0 հազ. դրամ, 2020 թվականին՝ 282,750.0 հազ. դրամ) գյուղատնտեսական հումք է մթերել ընկերության բաժնետիրոջը փոխկապակցված անձից, որով խախտել է որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը: Նշված վարկային միջոցներին բաժին ընկնող 60,864.0 հազ. դրամի (այդ թվում 2019 թվականին՝ 18,621.0 հազ. դրամ, 2020 թվականին՝ 42,243.0 հազ. դրամ) տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջե: Արդյունքում «Հայրիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից «Ավշարի գինու գործարան» ՍՊԸ-ին թիվ V19-048117 և V20-059679 վարկային պայմանագրերի շրջանակներում հատկացված 112,293.3 հազ. դրամ սուբսիդիայի գումարից 70,172.6 հազ. դրամը (18,621.0+2,103.0+7,205.6+42,243.0) ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջե, որը ստուգման ընթացքում վերականգնվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գանձապետական հաշվին:

3) 6 հումքի գնման պայմանագրերում առկա չէր հողատարածքի չափի վերաբերյալ տեղեկատվություն, որը որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ ենթակետի, ԳՖԿ-ի և «Էյչ-Էս Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրի 3.1 կետի պահանջների խախտում է: «Էյչ-Էս Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի և «ԱՐՄԵՆԻԱ ՎԱՅՆ» ԳՈՐԾԱՐԱՆ ՍՊԸ-ի միջև կնքված վարկային պայմանագրով 2020 թվականին սահմանված ժամկետից հետո տրամադրված 20,513.2 հազ. դրամի վարկի գումարը ավելացվել է 2021 թվականին տոկոսադրույքի սուբսիդավորման հայտերում, որով խախտվել են որոշմամբ հաստատված ծրագրի 40-րդ կետի և վարկային պայմանագրի 3.1 կետի պահանջները: Արդյունքում 2021 թվականին ավել է սուբսիդավորվել 2,765.0 հազ. դրամի տոկոսադրույք, որը ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4) «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և «ՊՌՈՇՅԱՆԻ ԿՈՆՑԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված թիվ Ռ-21/100 վարկի տրամադրման համաձայնագրի համաձայն գյուղատնտեսական հումքի մթերման դիմաց 19 ֆիզիկական և իրավաբանական անձանց ավել է վճարվել 3,108.6 հազ. դրամ գումար, որով խախտվել է որոշմամբ հաստատված ծրագրի 26-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը: Դրա արդյունքում ավել է սուբսիդավորվել 318.8 հազ. դրամի չափով տոկոսադրույքի գումար, որը որոշմամբ հաստատված ծրագրի 32-րդ կետի բ. ենթակետի համաձայն ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջե:

5) «ՊՌՈՇՅԱՆԻ ԿՈՆՑԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ-ն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակում հատկացված վարկային միջոցներից 2021 թվականի ընթացքում հումքի գնման պայմանագրի համաձայն 5,454.0 հազ. դրամի չափով գյուղատնտեսական հումք է մթերել ընկերության բաժնետիրոջը փոխկապակցված անձից, որով խախտել է որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը, որի արդյունքում 480.4 հազ. դրամի սուբսիդավորված տոկոսադրույքի գումարը ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջե: Բացի այդ, վերջինիս կողմից 1388 շահառուների հետ կնքված պայմանագրերում հողի չափի վերաբերյալ տեղեկատվությունը առկա էր միայն 665-ում, որը ծրագրի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջի խախտում է և համայնքի ղեկավարների կողմից մշակվող հողատարածքի վերաբերյալ տրված տեղեկանքներն առկա էին միայն 651 շահառուների մոտ:

6) 2021 թվականի հուլիս ամսին «Արդշինբանկ» ՓԲԸ-ի և «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի միջև կնքված 4 վարկային համաձայնագրերով հատկացված վարկային գումարը կազմում է 707,994.9 հազ. դրամ, որից կափարիչ և ապակե բանկաներ ձեռք բերելու նպատակով փոխանցվել է 367,513.5 հազ. դրամ: Համաձայն որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 1. 1) ենթակետի՝ «պահածոների արտադրության նպատակով պտուղբանջարեղենի մթերումներ իրականացնող վարկառուներին սույն կետի 1-ին ենթակետի շրջանակներում տրամադրվող վարկերից բացի մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը կարող է տրամադրվել լրացուցիչ վարկ՝ մթերված պտուղ-բանջարեղենի վերամշակումից ստացվող պատրաստի արտադրանքի տարայավորման համար անհրաժեշտ ապակե բանկաների, կափարիչների, ասեպտիկ պարկերի և դրանց տարաների ձեռքբերման համար անհրաժեշտ գումարի չափով»: 2022 թվականի հուլիսի 31-ի դրությամբ ՖԿ-ի կողմից ԳՖԿ-ին ներկայացված աճողական հաշվետվության համաձայն Վարկային համաձայնագրով տրամադրված ամբողջ գումարը՝ 707,994.3 հազ. դրամը փաստացի վճարվել է բերքի գնման պայմանագրերի դիմաց, որը չի համապատասխանում փաստացի կատարված ծախսերին: Կատարված խախտումների արդյունքում՝ հիմք ընդունելով որոշմամբ հաստատված

ծրագրի 32-րդ կետի բ. ենթակետի պահանջը (այն է՝ վարկն օգտագործվել է ոչ նպատակային և (կամ) սուբսիդավորման պայմաններին ոչ համապատասխան) ՀՀ պետական բյուջե վերադարձման է ենթակա 37,494.5 հազ. դրամ սուբսիդավորված տոկոսադրույքի գումար:

7) Հնարավորություն չի ընձեռվել հիմնավորել «ՊՈՌՇԱՐԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ-ի գծով ընդհանուր գումարով 194,454.0 հազ. դրամի չափով մթերում իրականացրած ընկերության բաժնետիրոջ և գյուղատնտեսական հումք մատակարարող անձանց փոխկապակցվածության հանգամանքը, որի դիմաց վճարված սուբսիդավորման գումարը կազմել է 17,128.9 հազ. դրամ: ՀՀ ընտրողների ռեգիստրի տեղեկատվության համաձայն բաժնետեր հանդիսացող անձը և մթերում իրականացնող անձինք գրանցված են նույն հասցեում: Վերջիններիս փոխկապակցվածությունը բաժնետիրոջ հետ հնարավոր է պարզել իրավասու մարմինների համապատասխան գործողությունների արդյունքում: Երեք ընկերությունների՝ «Արտաշատի Պահածոների գործարան», «ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱՐԱՏ ԿՈՆՅԱԿԻ-ԳԻՆՈՒ-ՕՂՈՒ ԿՈՄԲԻՆԱՏ» ԲԲԸ-ներին և «Վեդի Ալկո» ՓԲԸ-ին, տրամադրվել է ընդհանուր գումարով 2,663,869.9 հազ. դրամ վարկ, որի դիմաց փաստացի սուբսիդավորման գումարը կազմել է 370,884.2 հազ. դրամ: Նշված ընկերությունների բաժնետերերի և վերջիններիս հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հնարավոր չի եղել պարզել, քանի որ բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվությունը վարվում է կենտրոնական դեպոզիտորիայի կողմից: Ինքը վարկային պայմանագրերով տրամադրված 6,226,800.0 հազ. դրամ վարկային միջոցներով իրականացված գործարքներում առկա են հումքի ձեռքբերման մասով անհամապատասխանություններ, որոնց արժանահավատությունը և իսկությունը հնարավոր է պարզել իրավասու մարմինների համապատասխան իրավական գնահատական տալուց հետո: Նշենք, որ վերը նշված վարկերի տոկոսադրույքների փաստացի սուբսիդավորումը կազմել է 676,595.5 հազ. դրամ:

Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1. նախարարությունում քննարկել ստուգմամբ արձանագրված փաստերը, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու և հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ.

1) «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» 1022-12001 ծրագրի մասով.

ա) հանձնարարել ԳՖԿ-ին իրականացնելու հսկողություն, ՖԿ-ների և գյուղացիական տնտեսությունների միջև կնքված վարկային պայմանագրերում և ՖԿ-ների կողմից ԳՖԿ ներկայացվող սուբսիդավորման հայտերում հստակ ձևակերպվեն տրամադրվող վարկերի նպատակները,

բ) մշակել մեխանիզմներ նախարարության կամ ԳՖԿ-ի միջոցով վարկերի նպատակայնության մոնիթորինգներ իրականացնելու համար՝ հաշվի առնելով ՖԿ-ների կողմից մինչև այժմ իրականացված մոնիթորինգի արդյունքները,

գ) հանձնարարել համապատասխան ստորաբաժանումներին ծրագրի իրականացման ընթացքում ստացված արդյունքների վերաբերյալ կատարել առանձին հաշվառում՝ դրանք համադրելով ծրագրի VIII գլխով սահմանված ակնկալվող արդյունքների հետ.

2) «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» 1022-12004 ծրագրի մասով.

ա) մշակել մեխանիզմներ ԳՖԿ-ի և համապատասխան ստորաբաժանումների միջոցով որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 1) ենթակետով սահմանված վարկառուի հիմնադիր կամ բաժնետեր հանդիսացող անձանց կամ նրանց ընտանիքի անդամների (ծնող, ամուսին, զավակ) վերաբերյալ համապատասխան կառույցներից տեղեկությունների ստացման վերաբերյալ,

բ) նախարարության համապատասխան ստորաբաժանումների, ԳՖԿ-ի և ՖԿ-ների ուշադրությունը հրավիրել բերքի կամ կաթի գնման պայմանագրերում և հանձնման ակտերում արտահայտված ցուցանիշների արժանահավատության վրա,

գ) հանձնարարել ԳՖԿ-ին իրականացնել տարեկան կտրվածքով կոնկրետ քանակի մոնիթորինգներ որոշմամբ հաստատված ծրագրի 33-րդ կետի պահանջներին համապատասխան,

դ) հանձնարարել համապատասխան ստորաբաժանումներին ծրագրի իրականացման ընթացքում ստացված արդյունքների վերաբերյալ կատարել առանձին հաշվառում՝ դրանք համադրելով ծրագրի VII գլխով սահմանված ակնկալվող արդյունքների հետ,

ե) ստուգման ակտում վերականգնման առաջադրված 122,657.3 հազ. դրամ վերականգնել ՀՀ պետական բյուջեի «Նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին և հիմնավորող փաստաթղթերի պատճենները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

2. Ակտով արձանագրված առանձին հարցերին իրավական գնահատական տալու համար ստուգման նյութերը ուղարկել համապատասխան իրավասու մարմիններին:

3. Ստուգման ավարտից հետո ներկայացվել են լրացուցիչ փաստաթղթեր, որի արդյունքում ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը վերահաշվարկվել և պակասեցվել է 11,426.0 հազ. դրամի չափով: Հանդիպակաց ստուգման արդյունքներով արձանագրված 70,172.6 հազ. դրամը, համաձայն ԳՖԿ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի գրության փոխանցվել է ՀՀ

Էկոնոմիկայի նախարարության գանձապետական հաշվին, որը ՀՀ պետական բյուջե չի փոխանցվել:

Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են 804,955.7 հազ. դրամի խախտման փաստեր, որից 111,231.3 հազ. դրամը ենթակա է վերականգնման: 2023 թվականի ապրիլի 1-ի դրությամբ վերականգնվել է 71,272.6 հազ. դրամ:

## 6. «ՀԱՅԱՎՏՈԿԱՅԱՐԱՆ» ՓԲԸ

Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1. Խախտվել է ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտով սահմանված հիմնական միջոցների հաշվապահական հաշվառման վարման հիմնական պահանջները՝ «Հայավտոկայարան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ընկերություն) կողմից հիմնական միջոցների դասերից հողամասերի դասի ընդհանուր 1,135,007.2 հազ. դրամ արժեքով) յուրաքանչյուր միավորի համար առանձին հաշվառում չի իրականացվել, պարզ չէ, թե ինչ կարգով են հաշվառվել ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող շենք-շինությունների սպասարկման համար հատկացված հողամասերը հաշվապահական հաշվեկշռում:

2. ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 6-րդ կետի «բ» ենթակետի պահանջը չկատարելու արդյունքում, ընկերությունը 2020 թվականի շահութաբաժնի հաշվարկում գուտ շահույթը (շահութահարկի հաշվարկման բազան) չի ավելացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից արձանագրված 1,044.0 հազ. դրամ պետական կամ համայնքների բյուջեներ, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների դիմաց գանձվող տույժերը, տուգանքները և այլ գույքային սանկցիաները գումարի չափով: 2020 թվականի ընթացքում ընկերության կողմից տարածքների վարձակալության գծով վարձակալական պայմանագրի հաշվարկից 15 դեպքով վարձակալին պակաս հաշիվ տեղեկանք է ներկայացվել 1,067.1 հազ. դրամի չափով, որի արդյունքում պակաս եկամուտ է ձևավորվել 889.3 հազ. դրամի չափով: Ընկերության կողմից մեկ դեպքով խախտվել է ծառայության մատուցման պայմանագրի պահանջները և առանց գործարքը հիմնավորող սկզբնական փաստաթղթի՝ ընդունման-հանձնման ակտի, իրականացվել է 65,0 հազ. դրամի չափով վճարում: 2019 թվականի գործունեության արդյունքում կուտակված վնասի փաստացի գումարը ավել է ցույց տրվել 11,667.2 հազ. դրամի չափով: Հաշվի առնելով վերը նշվածը, 2020 թվականի արդյունքներով լրացուցիչ հաշվարկվել է 6,833.5 հազ. դրամի շահութաբաժնի գումար, որի նկատմամբ ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պատժամիջոցի կիրառման արդյունքում հաշվարկվել է տույժ 316.8 հազ. դրամի չափով: Այսպիսով, 2020 թվականի տարեկան գործունեության արդյունքներով ընկերության կողմից

շահութաբաժնի գծով ՀՀ պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարը կազմում է 7,150.3 հազ. դրամ (ներառյալ 316.8 հազ. դրամի տույժերի գումարը):

3. Ընկերությունը, խախտելով դրամաշնորհի տրամադրման պայմանագրի 2.3 կետի պահանջը 2021 թվականին ստացած 96,239.8 հազ. դրամ դրամաշնորհից չօգտագործված 3,301.4 հազ. դրամը 2021 թվականի դեկտեմբերի 27-ին փոխանցել է 2022 թվականի համար անշարժ գույքի հարկի կանխավճար և հաշվեկշռում ձևակերպել որպես դերիտորական պարտք գույքահարկի գծով: Հաշվի առնելով պայմանագրի 2.2 կետի պահանջը՝ որպես կանխավճար փոխանցված 3,301.4 հազ. դրամ գումարը ենթակա է հետգանձման ՀՀ պետական բյուջե:

Ստուգման արդյունքում առաջարկվել է.

1. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը քննության առնել ստուգման նյութերը, միջոցներ ձեռնարկել ստուգմամբ արձանագրված խախտումների ու թերությունների վերացման, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:

2. Հանձնարարել ընկերությանը.

1) Այսուհետ առաջնորդվել ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտով սահմանված հիմնական միջոցների հաշվապահական հաշվառման վարման հիմնական պահանջներով, մասնավորապես՝ հողամասերի դասի յուրաքանչյուր միավորի համար իրականացնել անալիտիկ հաշվառում:

2) Առաջնորդվել ՀՀՄՍ 20 «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ստանդարտով և հաշվապահական հաշվեկշռում որպես ոչ ընթացիկ պարտավորություն ներկայացված՝ ակտիվներին վերաբերող շնորհների, հաշվառման վերաբերյալ ապահովել տեղեկատվության ամբողջական ներկայացումը:

3) ՀՀ պետական բյուջեին հասանելիք շահութաբաժինները հաշվարկելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն և 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշումների պահանջներով:

4) Ակտով արձանագրված 7,150.3 հազ. դրամի լրացուցիչ շահութաբաժնի գումարը (ներառյալ 316.8 հազ. դրամի տույժերի գումարները), փոխանցել ՀՀ պետական բյուջեի «բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենտներ» գանձապետական հաշվին:

5) Դրամաշնորհի տրամադրման պայմանագրով հատկացված գումարից ակտով արձանագրված ՀՀ պետական բյուջե հետգանձման ենթակա 3,301.4 հազ. դրամը փոխանցել ՀՀ պետական բյուջեի «նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին:

Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել է վերականգման ենթակա 10,451.7 հազ. դրամի խախտման փաստեր, որից 2023 թվականի ապրիլի 1-ի դրությամբ վերականգնվել է 3,301.4 հազ. դրամը:

#### 4. ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1. Ինը օբյեկտների մոտ կատարված ընտրանքային հսկիչ չափագրումներով արձանագրվել են 73,110.0 հազ. դրամի չափով կատարողական ակտերով հաստատված և վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանքներ,

2. Վեց օբյեկտների մոտ կատարված տեղագնմամբ և հսկիչ չափագրմամբ արձանագրվել են 14,707.8 հազ. դրամի նյութերի փոխարինման արդյունքում ավել վճարման փաստեր,

3. Չորս օբյեկտների մոտ կատարված տեղագնմամբ և հսկիչ չափագրմամբ արձանագրվել են 5,251.4 հազ. դրամի անորակ կատարված աշխատանքներ և 1,538.4 հազ.դրամի՝ ոչ նպատակային ծախսեր:

4. Այսպիսով՝ վերը նշված խախտումների արդյունքում վերականգնման ենթակա գումարը կազմում է 94,607.6 հազ. դրամ, որից ստուգման ընթացքում վերականգնվել է 40,608.6 հազ. դրամ աշխատանքների տեսքով և ճշտգրտման արդյունքում պակասեցվել է 3,228.4 հազ. դրամ:

Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեում քննարկել ստուգմամբ արձանագրված փաստերը, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումներն ու թերությունները հետագայում բացառելու ուղղությամբ:

1) Խիստ հսկողություն սահմանել տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող գործառնությունների պատշաճ կատարման նկատմամբ, թույլ չտալ աշխատանքների ծավալային հավելագրումների և անորակության փաստեր:

2) Խիստ հսկողություն սահմանել հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող գործառնությունների պատշաճ կատարման նկատմամբ՝ նվազեցնելու նախագծային փոփոխությունների քանակները և ծավալները:

2. Ապահովել ստուգման արդյունքներով մնացած 45,518.7 հազ. դրամի վերականգնումը, իսկ 5,251.4 հազ. դրամի անորակ աշխատանքների վերացման ուղղությամբ ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել է վերականգման ենթակա 91,378.7 հազ. դրամի խախտման փաստեր, որից 2023 թվականի ապրիլի 1-ի դրությամբ վերականգնվել է 43,457.3 հազ. դրամը:

#### 5. «ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1. «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ ընկերություն) ՁԻԱՀ-ի շրջանակում գնման գործընթացի իրականացման նպատակով ՀՀ առողջապահության նախարարությունից ստացված 66,221.1 հազ. դրամ դրամաշնորհից տնտեսված 2,431.1 հազ. դրամը չի վերադարձրել դրամաշնորհատուին, որով խախտել է 2020 թվականի հուլիսի 28-ի թիվ ԱՆ-ԴՏՊ-ՁԻԱՀ-1 դրամաշնորհի տրամադրման պայմանագրի 2.1.8 կետի պահանջները: Նշված 2,431.1 հազ. դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

2. 2019 թվականի տարեկան գործունեության արդյունքներով պետպատվերի գծով կատարված աշխատանքների դիմաց հասույթը պակաս է ձևակերպել 2,212.7 հազ. դրամի չափով, որի հետևանքով ընկերության գուտ շահույթը պակաս է հաշվարկվել նույն գումարի չափով: Առանց հիմնավորող հաշվարկների չօգտագործված արձակուրդների պահուստ ձևավորելու արդյունքում ընկերությունը 4,930.0 հազ. դրամի չափով ավել ծախս է ձևակերպել, որի արդյունքում գուտ շահույթը պակաս է հաշվարկվել նույն գումարի չափով: Ընկերությունը ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 6-րդ կետի «գ» ենթակետի պահանջը չկատարելու արդյունքում 2019 թվականի շահութաբաժնի հաշվարկում գուտ շահույթը չի ավելացրել Ընկերության գործունեությանը չառնչվող ծախսերի չափով՝ գումարով 831.3 հազ. դրամ: Այսպիսով 2019 թվականի ստուգման արդյունքներով շահութաբաժնի հաշվարկման բազան ենթակա է ավելացման 7,974.0 հազ. դրամի չափով, որից լրացուցիչ հաշվարկվում է 3,987.0 հազ. դրամի շահութաբաժին, որի նկատմամբ ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պատժամիջոցի կիրառման արդյունքում հաշվարկվում է տույժ՝ 874.3 հազ. դրամի չափով:

3. 2020 թվականի տարեկան գործունեության արդյունքներով COVID-19-ի շրջանակում պետության կողմից հատկացված գումարներից ստացված եկամուտը 65,980.4 հազ. դրամի չափով պակաս ձևակերպելու հետևանքով գուտ շահույթը պակաս է հաշվարկվել նույն գումարի չափով: Դրամարկղ մուտքագրված և մատուցված վճարովի ծառայությունների դիմաց դուրս գրված հաշիվ ապրանքագրերի համաձայն իրացումից հասույթը պակաս է ձևակերպվել 22,884.7

հազ. դրամի չափով, որը արդյունքում գուտ շահույթը պակաս է հաշվարկվել նույն գումարի չափով, իսկ այլ եկամուտները՝ 391.3 հազ. դրամի չափով: Պետական պատվերի շրջանակում կատարված աշխատանքների դիմաց ստացված հասույթը 10,797.0 հազ. դրամի չափով ավել ձևակերպելու արդյունքում գուտ շահույթն ավել է հաշվարկվել նույն գումարի չափով: Հայաստանի զարգացման նախաձեռնություն հիմնադրամից ստացված դրամաշնորհի գումարից 8,416.8 հազ. դրամի չափով պակաս եկամուտ ձևակերպելու արդյունքում գուտ շահույթը պակաս է հաշվարկվել նույն գումարի չափով: Բարեգործական հիմնադրամներից որպես նվիրաբերություն բուժաշխատողներին պարգևատրելու համար և որպես ֆինանսական օգնություն փոխանցված 58,100.0 հազ. դրամ որպես եկամուտ չձևակերպելու արդյունքում գուտ շահույթը պակաս է հաշվարկվել նույն գումարի չափով: Աշխատավարձի գծով 6,956.2 հազ. դրամի չափով առհաշիվ տրված գումարները որպես ծախս ձևակերպելու արդյունքում գուտ շահույթը պակաս է հաշվարկվել նույն գումարի չափով: Ամորտիզացիոն մասհանումները ծախսերում 3,166.7 հազ. դրամի չափով պակաս ձևակերպելու արդյունքում գուտ շահույթն ավել է հաշվարկվել նույն գումարի չափով: ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 6-րդ կետի գ) ենթակետի պահանջը չկատարելու արդյունքում 2020 թվականի շահութաբաժնի հաշվարկում գուտ շահույթը չի ավելացրել Ընկերության գործունեությանը չառնչվող 3,212.7 հազ. դրամ գումարի ծախսերի չափով: Այսպիսով, 2020 թվականի ստուգման արդյունքներով շահութաբաժնի հաշվարկման բազան ենթակա է ավելացման 85,146.6 հազ. դրամի չափով, որից լրացուցիչ հաշվարկվում է 42,573.3 հազ. դրամի շահութաբաժին, որի նկատմամբ ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պատժամիջոցի կիրառման արդյունքում հաշվարկվում է տույժ՝ 4,227.0 հազ. դրամի չափով:

4. 2021 թվականի տարեկան գործունեության արդյունքներով ընկերությունը պակաս է ձևակերպել պետական պատվերի շրջանակում կատարված աշխատանքների դիմաց ստացված հասույթը 16,342.5 հազ. դրամի չափով, որի արդյունքում գուտ շահույթը պակաս է հաշվարկվել նույն գումարի չափով: Ամորտիզացիոն մասհանումները ծախսերում 449.9 հազ. դրամի չափով պակաս ձևակերպելու արդյունքում գուտ շահույթն ավել է հաշվարկվել նույն գումարի չափով: ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 6-րդ կետի «գ» ենթակետի պահանջը չկատարելու արդյունքում 2021 թվականի շահութաբաժնի հաշվարկում գուտ շահույթը չի ավելացվել ընկերության գործունեությանը չառնչվող 2,810.2 հազ. դրամ ծախսերի գումարի չափով: Ընկերությունը ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 6-րդ կետի «բ» ենթակետի պահանջը չկատարելու արդյունքում 2021 թվականի շահութաբաժնի հաշվարկում գուտ շահույթը չի ավելացրել պետական

կամ համայնքների բյուջեներ, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների դիմաց գանձվող տույժերի, տուգանքների և այլ գույքային սանկցիաների 9,156.5 հազ. դրամ գումարի չափով: Այսպիսով 2021 թվականի տարեկան շահութաբաժնի հաշվարկում շահութաբաժնի հաշվարկման բազան ենթակա է ավելացման 27,859.3 հազ. դրամի չափով, որից լրացուցիչ հաշվարկվում է 13,929.6 հազ. դրամի շահութաբաժին:

5. Այսպիսով, ընկերությունում կատարված ստուգման արդյունքներով 2019-2021 թվականների համար ՀՀ պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա շահութաբաժնի գումարը կազմում է 65,591.2 հազ. դրամ (4,861.3+46,800.3+13,929.6)՝ ներառյալ 5,101.3 հազ. դրամի տույժերի գումարները:

6. Ընկերության կողմից 2020-2021 թվականների ընթացքում COVID-19 համավարակի շրջանակում կատարված սննդի ծախսերի գծով ՀՀ առողջապահության նախարարությանը ավել է փոխհատուցման ներկայացվել 2,930.4 հազ. դրամ, որը ենթակա է հետ վերադարձման կամ վերաձևակերպման և մեկ դեպքով մատակարարին ավել է վճարվել 115,3 հազ. դրամ, որը վերջինիս կողմից ենթակա է վերադարձման:

Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1. ՀՀ առողջապահության նախարարությունում քննության առնել ստուգման նյութերը, միջոցներ ձեռնարկել ստուգմամբ արձանագրված խախտումների ու թերությունների վերացման, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:

2. Հանձնարարել Ընկերությանը.

1) առաջնորդվել ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտով սահմանված հիմնական միջոցների հաշվապահական հաշվառման վարման հիմնական պահանջներով,

2) առաջնորդվել ՀՀՄՍ 20 «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ստանդարտով և հաշվապահական հաշվեկշռում որպես ոչ ընթացիկ պարտավորություն ներկայացված՝ ակտիվներին վերաբերող շնորհների, հաշվառման վերաբերյալ ապահովել տեղեկատվության ամբողջական ներկայացումը,

3) արձանագրված 65,591.2 հազ. դրամի լրացուցիչ շահութաբաժնի գումարը (ներառյալ 5,101.3 հազ. դրամի տույժերի գումարները), փոխանցել ՀՀ պետական բյուջեի «բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենտներ» գանձապետական հաշվին,

4) դրամաշնորհի տրամադրման պայմանագրով հատկացված գումարից արձանագրված ՀՀ պետական բյուջե հետգանձման ենթակա 2,431.1 հազ. դրամը փոխանցել ՀՀ պետական բյուջեի «նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին,

5) 2020-2021 թվականների ընթացքում «COVID-19» համավարակի շրջանակում ՀՀ առողջապահության նախարարությանը որպես սննդի համար կատարված ծախս ավել փոխհատուցման ներկայացված 2,930.4 հազ. դրամ գումարը հետ փոխանցել ՀՀ պետական բյուջեի «նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին,

6) ՀՀ պետական բյուջեին հասանելի շահութաբաժինները հաշվարկելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն և 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշումների պահանջներով:

Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել է վերականգնման ենթակա 70,952.7 հազ. դրամի խախտման փաստեր, որից 2023 թվականի ապրիլի 1-ի դրությամբ վերականգնվել է 2,431.1 հազ. դրամը:

## 7. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՆԴ» ՓԲԸ

Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1. 2019 թվականի տարեկան գործունեության արդյունքներով «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ընկերություն) կողմից շահութաբաժնի գծով ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա լրացուցիչ գումարը կազմել է 1,712.5 հազ. դրամ:

2. 2021 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվության տվյալների համաձայն ընկերության տարեկան գործունեության արդյունքներով վնասը՝ շահութահարկի գծով ծախսերի նվազեցումից հետո, կազմել է 797,402.0 հազ. դրամ: Ընկերության 2021 թվականի գործունեության արդյունքներով առաջացած 797,402.0 հազ. դրամ վնասից 607,588.1 հազ. դրամը կազմում է աշխատակիցների աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների գծով ծախսերը: Աշխատավարձի գծով փաստացի ծախսը կազմել է 1,662,900.0 հազ. դրամ, սակայն հիմնադրին ներկայացվող հաշվետվություններով ցույց է տրվել 1,055,311.9 հազ. դրամ կամ պակաս է ցույց տրվել 607,588.1 հազ. դրամի չափով ծախս: Ճշտված նախահաշվի համաձայն աշխատավարձի վարձատրության և դրան հավասարեցված վճարների գծով ծախսը նախատեսվել է 1,080,001.2 հազ. դրամ կամ նախահաշվով նախատեսվածից ավել ծախս է կատարվել 582,898.8 հազ. դրամի չափով (նույն թվում վճարվել է 279,300.0 հազ. դրամի պարգևատրում), ձևավորելով նույն գումարի չափով վնաս: ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 14-ի N 1701-Ն որոշման հիման վրա բաժնետերը Ընկերության կանոնադրական կապիտալում կատարել է 4,733,000.0 հազ. դրամի չափով ներդրում նորաստեղծ ավիաընկերության բաժնետոմսերի դիմաց վճարման նպատակով՝ ավելացնելով Ընկերության կանոնադրական կապիտալը լրացուցիչ

բաժնետոմսեր թողարկելու և Հայաստանի Հանրապետության օգտին տեղաբաշխելու միջոցով: 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ որևէ ներդրում չի կատարվել, մինչդեռ Ընկերության հաշվարկային հաշիվների դրամական միջոցների մնացորդը, ըստ հաշվապահական փաստաթղթերի կազմել է 292,230.0 հազ. դրամ, իսկ ժամկետային ավանդների գումարը՝ 4,165,345.0 հազ. դրամ, ընդամենը՝ 4,457,575.0 հազ. դրամ, կամ առնվազն 275,425.0 հազ. դրամի չափով կատարվել են ոչ նպատակային ծախսեր: Ընկերությունը առաջին ներդրումը կատարել է «Հայկական ավիատոլիներ» ՓԲԸ-ի (վերջինս հիմնադրվել է 2021 թվականի դեկտեմբերին) 49% բաժնեմասում, 2022 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում և ներդրման ընդհանուր գումարը կազմել է 2,366,861.7 հազ. դրամ: 2019-2021 թվականների ընթացքում արտասահմանյան գործուղումներ մեկնելու նպատակով ընկերության կողմից 20,283.9 հազ. դրամի չափով ձեռքբերված ավիատոմսերից 16,792.3 հազ. դրամի ավիատոմսերը ձեռք են բերվել «Գնումների մասին» օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի խախտումներով: 2019-2021 թվականների ընթացքում ընկերության միջոցների հաշվին 5 դեպքով, ընդհանուր գումարով 4,590.8 հազ. դրամի չափով գործուղման են մեկնել ընկերության աշխատակից չհանդիսացող անձիք: 2020 թվականին 1 գործուղման դեպքով կատարված 5,515.5 հազ. դրամ ծախսից 1,587.5 հազ. դրամի ծախսի վերաբերյալ հիմնավորող փաստաթուղթ ստուգմանը չի ներկայացվել:

Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1. ընկերությունում քննության առնել ստուգման նյութերը, միջոցներ ձեռնարկել ստուգմամբ արձանագրված խախտումների ու թերությունների վերացման, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ.

1) դրամաշնորհի տրամադրման պայմանագրերով հատկացված գումարները ծախսել նախահաշվով նախատեսված ուղղությունների սահմաններում և ըստ նպատակայնության, բացառելով պայմանագրից դուրս ավել ծախսումների կատարումը,

2) խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելիս հստակ ձևակերպել տեխնիկական բնութագրի պայմանները՝ մասնավորապես գնման առարկան բնութագրել օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք կարիքին, ինչպես նաև սահմանել կատարողականի չափելի արդյունքային ցուցանիշներ,

3) 2019 թվականի գործունեության արդյունքներով արձանագրված 1,712.5 հազ. դրամ շահութաբաժնի գումարի չափով նվազեցնել որպես կանխավճար ձևակերպված 2,883.5 հազ. դրամ շահութաբաժնի գումարը,

4) ՀՀ պետական բյուջեին հասանելիք շահութաբաժինները հաշվարկելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն և 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշումների պահանջներով:

Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել է 1,712.5 հազ. դրամի խախտման փաստեր, որը ենթակա է պակասեցման 2,883.5 հազ. դրամ շահութաբաժնի կանխավճարից:

#### 8. ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1. Կատարված ընտրանքային հսկիչ չափագրումներով արձանագրվել են 669.4 հազ. դրամի կատարողական ակտերով հաստատված և վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանքներ,

2. Տեղագնմամբ և հսկիչ չափագրմամբ արձանագրվել է 4,356.6 հազ. դրամի անորակ կատարված աշխատանքներ (կողնակների ամրացում կոպճային շերտով և հարթեցում ու խտացում պնևմագրոնով, կողային առուների մաքրման աշխատանքներ),

3. Վեց դեպքով կատարված աշխատանքները պայմանագրերով սահմանված ժամկետներից ուշ հանձնելու համար չի հաշվարկվել 370.1 հազ. դրամի չափով տույժի գումար, որով խախտվել է կողմերի միջև կնքված պայմանագրերի 5.3 կետի պահանջը:

Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում (այսուհետ՝ նախարարություն) քննարկել ստուգմամբ արձանագրված փաստերը, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու և հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ.

2. Խիստ հսկողություն սահմանել տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող գործառույթների պատշաճ կատարման նկատմամբ, թույլ չտալ աշխատանքների ծավալային հավելագրումների և անորակության փաստեր:

3. Սահմանել հսկողություն իրականացվող գնման ընթացակարգերում «Գնումների մասին» օրենքի պահանջներին համապատասխան բոլոր փաստաթղթերի պատշաճ լրացման և ժամանակին հրապարակման նկատմամբ:

4. Ապահովել ստուգման արդյունքներով արձանագրված 370.1 հազ. դրամի վերականգնումը Նախարարության հաշվարկային հաշվին, իսկ 5,026.0 հազ. դրամը վերականգնել ՀՀ պետական բյուջեի «Նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ»

գանձապետական հաշվին և հիմնավորող փաստաթղթերի պատճենները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել է վերականգնման ենթակա 5,396.1 հազ. դրամի խախտման փաստեր, որից 2023 թվականի ապրիլի 1-ի դրությամբ վերականգնվել է 370.1 հազ. դրամը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Բ. ԲԱԴԱԼՅԱՆ